Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն
«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Ծովասարի Բ. Մուրադյանի անվան միջնակարգ դպրոց

Առարկա՝ Հայոց լեզու և գրականություն

Թեմա՝ Աուտիզմով սովորողների կրթության կազմակերպումն ու ներառումը կրտսեր դպրոցում

Վերապատրաստող, մենթոր՝ Թամարա Իսոյան

Ուսուցիչ՝ Մելանյա Պետրոսյան

2023

Բովանդակություն

Ներածություն…….2

Առաջին գլուխ

Ներառական կրթություն…… 3

Ներառական կրթությունը Հայաստանում 11

Երկրորդ գլուխ

Աուտիզմ……12

Աուտիզմի առաջացման պատճառները …….13

Ինչպես է աուտիզմն արտահայտվում 15

Ասպերգերի համախտանիշ……18

Մանկական աուտիզմ……..23

Երրորդ գլուխ

Աուտիզմով սովորողների կրթության կազմակերպումն ու ներառումը.....26

Անհատական ուսումնական պլան / ԱՈՒՊ / …….27

Զարգացնող խաղեր……..28

Եզրակացություն.....32

Օգտագործված գրականության ցանկ……..33

Ներածություն

Իմ հետազոտական աշխատանքի թեման է «Աուտիզմով սովորողների կրթության կազմակերպումը ու ներառումը կրտսեր դպրոցում»: Այն ունի ներածություն, հիմնական մաս և եզրակացություն: Հիմնական մասը բաղկացած է երեք գլխից:

Առաջին գլխում ներկայացրել եմ, թե ինչ է իրենից ներկայացնում ներառական կրթությունը՝ նշել նրա առանձնահատկությունները, առավելություններն ու դժվարությունները: Անդրադարձել, թե ներառական կրթությունը երբ և ինչպես է Հայաստանում իրականացվել:

Երկրորդ գլխում մանրամասն ներկայացրել եմ՝ ինչ է իրենից ներկայացնում աուտիզմը, ինչպես է այն դրսևորվում, որոնք են դրա առաջացման հնարավոր պատճառները, դասակարգումը: Առանձնահատուկ ուշադրություն եմ դարձրել Մանկական աուտիզմին և Ասպերգերի սինդրոմին:

Իսկ երրորդ գլխում ներկայացրել եմ, թե ինչ պայմաններ են պետք՝ աուտիկ երեխաների կրթության կազմակերպմանն ու հնարավորինս ներառմանը կրտսեր դպրոցներում: Կրթության լիարժեք կազմակերպման համար, կարևորել եմ անհատական ուսումնական պլանների առկայությունը և ներկայացրել, թե ինչ կառուցվածք ունի, ինչ նպատակով է այն կազմվում և ովքեր են դրա կազմանը մասնակցում: Եթե խմբում կամ դասարանում առկա է աուտիզմով սովորող, ինչ պետք է հաշվի առնի մանկավարժը ուսուցումը կազմակերպելիս, ինչպիսի մոտեցում ցուցաբերի՝ երեխայի կրթությունն ու ներառումը առավել արդյունավետ դարձնելու նպատակով: Առաջարկել եմ նաև խաղ-վարժություններ, որոնք կնպաստեն խմբի կամ դասարանի բոլոր սովորողների լիարժեք ներգրավմանը:

Վերջում ներկայացրել եմ կատարած աշխատանքի եզրակացությունը:

Առաջին գլուխ

Ներառական կրթություն

Ի՞նչ է ներառական կրթությունը

Ներառական կրթությունը կրթական այնպիսի ծրագիր է, որը բացառում է ամեն տեսակ խտրականություն երեխաների նկատմամբ, ապահովում է հավասար վերաբերմունք բոլոր մարդկանց հանդեպ, կրթական համակարգում ստեղծում է ուրույն պայմաններ առանձնահատուկ կրթական կարիքներ ունեցող անձանց համար:

Ներառական կրթությունը հանրակրթության զարգացման գործընթաց է, որը ենթադրում է կրթության մատչելիություն բոլորի համար, երեխաների ամենատարբեր կարիքների բավարարմանն ուղղված բոլոր տեսակի միջոցների ապահովում, ինչը հանրակրթական դպրոց մտնելու այցեքարտ է ընձեռնում հատուկ կարիքներ ունեցող երեխաներին:

Ներառական կրթությունը ձգտում է հասնել ուսուցման նկատմամբ առավել ճկուն մոտեցման՝ բավարարելու մարդկանց զանազան կրթական պահանջները: Եթե ներառական կրթության մտցրած փոփոխությունները ուսուցումն ավելի արդյունավետ դարձնեն, ապա կշահեն բոլոր երեխաները, այլ ոչ միայն առանձնահատուկ կրթության կարիքներ ունեցողները:

Չի կարելի ստեղծել ներառական կրթության համընդհանուր կաղափար, որը կարելի լինի առանց որևէ փոփոխության ներմուծել յուրաքանչյուր հասարակություն. ամեն մի հանրություն ինքը պիտի մշակի և իրագործի սեփական գաղափարները:

Սակայն կան որոշ հիմնական սկզբունքներ, որոնք պետք է հաշվի առնել ցանկացած միջավայրում: Ահա դրանք.

- Երեխաները հաճախում են տեղական՝ բնակավայրին մոտ գտնվող, մանկապարտեզ և դպրոց:
- Մեթոդիկան այնպիսին է, որ նպաստում է տարբեր հնարավորություններ ունեցող երեխաների ուսուցմանը:
- Բոլոր երեխաները մասնակցում են բոլոր միջդպրոցական միջոցառումներին՝ մրցույթներ, ցերեկույթներ, էքսկուրսիաներ և այլն:
- Ներառական կրթության զարգացմանն օժանդակում են ուսուցիչները, ծնողները, առհասարակ, բոլոր նրանք, ում միջամտությունը կարող է այս կամ այն կերպ օգտակար լինել:
- Ներառական կրթությունն օգնում է կանխել խտրականությունը երեխաների նկատմամբ՝ սատարելով նրանց բոլորին՝ ինչպես հատուկ կարիքներ ունեցողներին, այնպես էլ չունեցողներին, իրենց՝ հասարակության լիիրավ անդամ լինելու գործում:

Հատուկ կրթություն

- Երեխաների կրթությունը առանձնացված միջավայրում:
- Կրթությունը կառուցված է ուսուցչի անհատական աշխատանքի վրա:

Ինտեգրացված կրթություն

- Երեխան հանրակրթական դպրոցում է:
- Երեխայի կրթությունը չի ուղեկցվել դպրոցների կազմակերպման, ուսումնական պլանների ու դասավանդման մեթոդների:
- Համապատասխան փոփոխություններով հանրակրթական:

Ներառական կրթություն

- Երեխայի կրթությունը իր համայնքի սովորական դպրոցում:
- Ընդունում է, որ բոլոր երեխաները տարբեր են իրենց կարիքներով և կարողություններով:
- Կառուցված է թիմային աշխատանքի վրա:

Պետք է հիշել՝

- Ներառական կրթության իրագործմանն ուղղված բոլոր ջանքերը հենվում են իրավահավասարության գաղափարի վրա. եթե մենք դա անում ենք ելնելով խղճահարությունից կամ բարեգործական մղումներից, երբեք չենք կարող անհրաժեշտ արդյունքի հասնել:
- Բոլոր երեխաներն էլ կարող են սովորել. պետք է ապահովել համապատասխան պայմաններ նրանց կրթության համար:
- Կան բազմաթիվ կրթօջախներ, որոնք աշխատում են ի շահ հատուկ կարիքներ ունեցող երեխաների և լավ են կատարում իրենց աշխատանքը: Եթե ներառական կրթության մեթոդաբանությունը մշակված է ողջ կրթական համակարգի համար, ապա ամեն մի երեխա կգտնի իր տեղն այդ համակարգում, և հնարավոր կլինի դպրոցում սովորելը համատեղ ընտանիքի գրկում ապրելու հետ:

Ինչո՞ւ է ներառումն անհրաժեշտ

Երեխաները, անկախ հաշմանդամ լինելուց կամ կրթական դժվարություններ ունենալուց, դպրոցն ավարտելուց հետո որոշակի դերակատարություն ունեն հասարակության կյանքում և վաղ սկիզբը հանրակրթական խաղախմբերում կամ մսուրներում, որոնց հաջորդում են միջնակարգ դպրոցն ու քոլեջը, լավագույն նախապատրաստությունն է ինտեգրված կյանքի համար:

Հաշմանդամ երեխաներ ունեն նույն խմբին պատկանելու նույնպիսի իրավունք, ինչպես մյուսները: Առանձնացված ուսուցումը սահմանափակում է ինքնաարտահայտման իրավունքներն ու հնարավորությունները:

Հաշմանդամ կամ սովորելու դժվարություններ ունեցող մարդիկ առանձնացման կամ պաշտպանության կարիք չունեն:

Ի՞նչ է անում ներառական կրթությունը

Նպաստում է հասարակության բոլոր անդամների հնարավորությունների հավասարեցմանը՝ հաստատելով, նոր հարաբերություններ և ստեղծագործական հնարավորություններ որոնք անցյալում անհնար էին: Ներառական կրթությունը մարդու իրավունք է, այն ապահովում է լավ կրթություն և սոցիալական առումով հիմնվորված է: Դպրոցում երեխաներին միմյանցից առանձնացնելու օրինական հիմքեր չկան: Երեխաները պետք է սովորեն միասին, դա օգտակար կլինի բոլորի համար: Պետք չէ նրանց պաշտպանել միմյանցից: Բոլոր երեխաները պետք է կրթություն, որը կօգնի նրանց հարաբերություններ հաստատել և պատրաստվել կյանքին հասարակության մեջ: Միայն ներառական մոտեցումը կարող է նվազեցնել վախը և նպաստել բարեկամության, հարգանքի ու փոխըմբռնման հաստատմանը:

Ներառական կրթության գաղափարի երաշխիքը մարդու կրթության իրավունքն է: Այդ իրավունքը իրականացնելու նպատակով «կրթություն բոլորի համար» շարժումը նախաձեռնել է ամեն հնարավորը, հիմնական կրթությունը բոլորի համար դարձնելու մատչելի:

Ներառական կրթությունը՝ որպես ներառման քաղաքականության բաղկացուցիչ, հնարավորություն է տալիս երեխաներին սովորելու իրենց համայնքներում գտնվող դպրոցներում:

Ներառական կրթությունը հոգ է տանում բոլոր սովորողների մասին, հատկապես նրանց, ովքեր հաճախ զրկված են կրթություն ստանալու հնարավորությունից՝ նկատի ունենալով հատուկ կարիքներով սովորողներին, հաշմանդամներին, էթնիկ, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին և այլոց:

Ներառական ուսուցումը հնարավորություն է տալիս դպրոցներին ծառայել բոլոր երեխաներին: Այլ խոսքով, ներառական կրթությունը ենթադրում է դպրոցներ, որոնք պատրաստ են ուսուցման գործընթացում ներգրավել բոլոր սովորողներին՝ անկախ նրանց ունեցած բնութագրերից, կարիքներից կամ դժվարություններից, և որոնք ավելի շուտ հաշվի են նստում սովորողների բազմազանության հետ, քան թե խուսափում դրանից:

Ներառական կրթությունը նկատի ունի նաև կրթական համակարգում ավելի լայն հնարավորություններով այնպիսի դպրոցների ստեղծում, որոնք իրենց բնույթով ներառական են, և որոնք օգտագործում են համայնքների բոլոր ռեսուրսները՝ իրենց իսկ սովորողների հիմնախնդիրները առավել արդյունավետ լուծելու համար:

Հասկացություն ներառական կրթության մասին

Ներառական կրթությունը գործընթաց է, որը հենվում է բոլոր երեխաների՝ այդ թվում նաև կրթության հատուկ պայմանների կարիք և սոցիալապես սահմանափակ հնարավորություններ ունեցող, կրթություն ստանալու իրավունքի վրա: Ներառական կրթությունը հենված է այն համոզմունքի վրա, որ բոլոր երեխաներին կրթելը հանրակրթական համակարգի պարտականությունն է:

Ներառումը ծագում է հատուկ կրթությունից: Հատուկ կրթությունը զարգացել է մի շարք փուլերով, որոնց ընթացքում ուսումնասիրվել են հաշմանդամ երեխաների և սովորելու դժվարություններ ունեցող աշակերտների կարիքների բավարարման տարբեր ուղիներ: Որոշ դեպքերում հատուկ կրթությունը լրացրել է հանրակրթությանը, սակայն եղել է լրիվ առանձնացված: Վերջին տարիներին կասկածի տակ է դրվել առանձնացված կրթական համակարգերի նպատակահարմարությունը ինչպես մարդու իրավունքների, այնպես էլ արդյունավետության տեսանյունից:

Կրթությունը պետք է համարվի ցանկացած անձի զարգացմանը նպաստող միջոց՝ անկախ ֆիզիկական կամ այլ խոչընդոտներից: Ուստի, որևէ տեսակի հաշմանդամություն չի կարող արգելք լինել մարդու կրթություն ստանալու իրավունքի համար: Այսպիսով, ներառումը ենթադրում է մի գործընթացի ծավալում, որն ուղղված է բոլոր կարիքներին՝ ներառյալ նրանց, ովքեր ենթակա են մեկուսացման և բացառման:

Առանձնացված հատուկ դպրոցներում երեխաներին ուսուցանելը հակասում է տան, ընտանիքի և համայնքի կյանքին մասնակցության նրանց իրավունքին: Չնայած հատուկ դպրոցների որոշ կրթական առավելությունների՝ կրթության հատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների բաժանումը ընտանիքից ու տնից հաճախ խոսում է հասարակության մեջ այդպիսի մարդկանց նկատմամբ գոյություն ունեցող նախապաշարմունքների մասին:

Ներառումը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին հնարավորություն կտա կրթություն ստանալ իրենց համայնքներում և չմեկուսանալ ընտանիքներից:

Ներառական կրթությունը հաշմանդամության սոցիալական մոդելի յուրօրինակ ածանցյալն է: Այն ընդունում է, որ բոլոր երեխաները տարբեր են, և դպրոցներն ու հանրակրթական համակարգը պետք է հարմարվեն բոլոր սովորողների (զարգացման հապաղումներով, առանձնահատուկ կարիքներով և առանց դրանց) անհատական պահանջմունքներին:

Սակայն, **ներառում չի նշանակում բոլորին ձուլելու կամ միատեսակ դարձնելու ձգտում**: Այն ընդունում է, որ երեխաները սովորում են տարբեր արագությամբ, իսկ ուսուցիչներին անհրաժեշտ են հատուկ հմտություններ՝ ուսուցման գործընթացի ճկունությունն ապահովելու համար: Պարզապես երեխաներին անհրաժեշտ է հասկանալի, մատչելի դասավանդում; Իսկ դա ենթադրում է երեխայի առանձնահատկություններին, անհատական կրթական պահանջմունքներին, զարգացման ընթացքին, ընդունակություններին և կարողություններին համապատասխանող տարբեր մեթոդների գործադրում:

Կրթական հատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ընդգրկումը հանրակրթական դպրոցներ կստիպի ուսուցիչներին կիրառել նոր՝ դեպի երեխան կողմնորոշված մեթոդներ, ապահովել մեծ թվով մասնակիցների ընդգրկվածություն ուսումնական գործընթացում:

Որոշ ուսուցիչներ ենթադրում են, թե կրթության հատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման համար իրենց անհրաժեշտ կլինեն «հատուկ հմտություններ»: Սակայն փորձը ցույց է տալիս, որ կրթության հատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին հանրակրթական գործընթացի մեջ ներգրավելու համար ընդամենը անհրաժեշտ է որակյալ, հասկանալի և մատչելի դասավանդում, որը և նպաստում է բոլոր սովորողների ակտիվության բարձրացմանը: Ինչ խոսք, ի լրումն այդ ամենի, անհրաժեշտություն կառաջանա հատուկ տեխնիկական օժանդակության և երեխայի զարգացման կոնկրետ խանգարումներով պայմանավորված սարքավորումների գործադրման: Այս գործունեության դրական արդյունք կարող է հանդիսանալ որակի բարձրացումն ու սովորողների ձեռքբերումները (այդ թվում նաև կրթական գործընթացից դուրս մնացած և ցածր առաջադիմությամբ աշակերտների թվի նվազեցումը):

Չի կարելի ժխտել, որ ներառական կրթությունը կարող է բարձրացնել կրթության որակը բոլորի համար:

Ներառական կրթության հիմքում ընկած գաղափարախոսությունը **բացառում է երեխաների ցանկացած խտրականություն, ապահովում է հավասար վերաբերմունք բոլոր մարդկանց նկատմամբ, ստեղծում է հատուկ պայմաններ հատուկ պահանջնունքներ ունեցող երեխաների համար:**

Փորձը ցույց է տալիս, որ կրթական ցանկացած կոշտ համակարգից երեխաների ինչ-որ մասը դուրս է մնում, քանի որ համակարգը պատրաստ չէ այդպիսի երեխաների ուսուցման անհատական պահանջմունքների բավարարմանը: Սրանց թիվը կազմում է դպրոցահասակ երեխաների ընդհանուր թվի 15%-ը: Արդյունքում, դուրս մնացած երեխաները մեկուսացվում և հեռացվում են ընդհանուր համակարգից: Պետք է

հասկանալ, որ ոչ թե երեխաներն են անհաջողության մատնվում, այլ համակարգն է հեռացնում երեխաներին: Ներառական մոտեցումները կարող են աջակցել այդպիսի երեխաներին ուսման մեջ հաջողության հասնելու, ինչը նրանց սոցիալիզացման համար լավ նախադրյալներ կստեղծի:

Ուսուցումը ներառական դպրոցներում հնարավորություն է ընձեռում երեխաներին ձեռք բերել անձնական կենսափորձի վրա հենված գիտելիքներ մարդու իրավունքների մասին (թեպետ դա նրանց հատուկ չի դասավանդվում), ինչը հանգեցնում է խտրական դրսևորումների նվազեցման, քանի որ երեխաները սովորում են ճիշտ հարաբերվել իրար հետ, ճանաչել և ընդունել միմյանց տարբերությունները:

Ներառական կրթությունը նաև դինամիկ և զարգացող գործընթաց է: Այն ենթադրում է բազմազանություններին արձագանքելու այնպիսի արդյունավետ ձևերի որոնում, որոնք հնարավորություն կտան անընդհատ դիտարկումների և վերլուծությունների միջոցով ճիշտ գնահատել սովորողների կարիքները՝ ստեղծված իրադրություններում կողմնորոշվելու և համարժեք քայլեր ձեռնարկելու համար:

Այսպիսով՝ **ներառական կրթությունը**

- Ընդունում է, որ բոլոր երեխաները կարող են սովորել:
- Ընդունում և հարգում է երեխաների տարբերությունները՝ տարիքը, սեռը, ծագումը, լեզուն, զարգացման խնդիրները, անհատական առանձնահատկությունները, ընտանիքի սոցիալական կարգավիճակը և այլն:
- Նպաստում է բոլոր երեխաների կարիքներին համապատասխան կրթական գործընթացի կազմակերպմանն ու իրականացմանը:
- Նպաստում է ներառական հասարակության կառուցման հեռահար ռազմավարական գաղափարի իրականացմանը:
- Դինամիկ և զարգացող գործընթաց է:

Կրթության մեջ ներառումը ենթադրում է

- Բոլոր սովորողների կրթական կարիքների հավասար գնահատում:
- Ուսումնական, մշակութային, համայնքային միջոցառումներին սովորողների ներգրավվածության աստիճանի բարձրացում:
- Դպրոցների վարած քաղաքականության վերակառուցումը և դրա համապատասխանեցում սովորողների բազմազանությանը և առանձնահատկություններին:

- Ուսուցման ոլորտում արհեստական խոչընդոտների վերացում և նրանում բոլոր սովորողների ներգրավում (չսահմանափակվելով միայն հաշմանդամներով և կրթական հատուկ պահանջներ ունեցողներով):
- Խոչընդոտները հաղթահարելու փորձի ձեռք բերում, որը կոչված է ապահովելու որոշակի սովորողների մասնակցությունն ուսումնական գործընթացին՝ սովորողների համար ավելի մեծ փոփոխությունների ակնկալիքներով,
- Սովորողների միջև առկա տարբերությունները ոչ թե որպես դժվար հաղթահարվող բարդության, այլ որպես կրթական գործընթացին նպաստող հանգամանքի ընդունում:
- Սեփական համայնքում կրթություն ստանալու սովորողների իրավունքի ապահովում:
- Ինչպես դպրոցի աշխատակազմի, այնպես էլ սովորողների համար ուսումնական պայմանների բարելավում:
- Արժեքների ձևավորման ու զարգացման, ինչպես նաև նվաճումների մեծացման գործում դպրոցների դերի կարևորում:
- Դպրոցների ու համայնքների միջև փոխշահավետ հարաբերությունների հաստատում:
- Կրթությունը՝ որպես հասարակության մեջ մարդու լիարժեք ներառման և ինքնադրսևորման կարևորագույն բաղադրամասի ճանաչում:

Այսպիսով, ներառական կրթությունը մարդու իրավունք է. այն կարող է ապահովել լավ կրթություն և սոցիալական առումով հիմնավորված է: Ներառական կրթության իրականացման անհրաժեշտությունը հիմնված է հետևյալի վրա.

Իրավունքի առումով.

1. Բոլոր երեխաները միասին սովորելու իրավունք ունեն:
2. Երեխաներին չի կարելի թերարժևորել, կամ նրանց նկատմամբ խտրական վերաբերմունք ցուցաբերել հաշմանդամության կամ սովորելու դժվարություններ ունենալու պատճառով:
3. Հաշմանդամ մեծահասակները, որոնք ժամանակին սովորել են հատուկ դպրոցներում, այսօր արդեն պահանջում են վերջ տալ խտրականությանը:
4. Երեխաներին տարատեսակ դպրոցներում միմյանցից առանձնացնելու օրինական պատճառներ չկան: Երեխաները պետք է սովորեն միասին. դա օգտակար կլինի բոլորի համար: Պետք չէ առանձնացնել նրանց միմյանցից:

Կրթության որակի առումով.

5. Հետազոտությունները ցույց են տալիս, որ ակադեմիական և սոցիալական առումներով, երեխաներն ավելի լավ արդյունքների են հասնում ներառական կրթության դեպքում:
6. Հատուկ դպրոցում չկա այնպիսի բան, որ չի կարելի անել հանրակրթական դպրոցում:
7. Նվիրվածության և աջակցության դեպքում ներառական կրթությունը ուսումնական ռեսուրսների ավելի արդյունավետ օգտագործումն է:

Սոցիալական հարցերի առումով.

8. Խտրականությունը երեխաների մեջ սերմանում է վախ, տգիտություն, նախապաշարումներ, չարություն:
9. Բոլոր երեխաները զգում են կրթության կազմակերպման այնպիսի ձևի կարիք, որը կօգնի նրանց հարաբերություններ հաստատել բոլորի հետ և պատրաստվել հասարակական կյանքին:
10. Միայն ներառական մոտեցումը կարող է նվազեցնել վախը և նպաստել բարեկամության, հարգանքի ու փոխըմբռնման հաստատմանը:

Ներառումը մոտեցում է, որի դեպքում հաշվի է առնվում սովորողների բազմազանությունը, որի ժամանակ ուսումնական պլաններն ու նպատակները հարմարեցվում են սովորողների ընդունակություններին ու պահանջմունքներին: Այդ պրոցեսում կարևոր է ուսուցիչների, հատուկ մանկավարժների և նրանց դերը, ովքեր իրենց փորձն ու գիտելիքներն են ներդնում, որպեսզի յուրաքանչյուր երեխա կարողանա սովորել իր համար առավելագույնով:

Ներառական կրթությունը Հայաստանում

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին համակարգված պրոֆեսիոնալ աջակցություն ցուցաբերելու գիտակցությամբ «Հույսի կամուրջ» ՀԿ-ն ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ համատեղ 2001-ին առաջինը Հայաստանում սկսեց ներառական կրթության ծրագիրը:
2005 թ. սեպտեմբերի 1-ին ուժի մեջ մտավ «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքը:

Դրանով պետականորեն ճանաչվեց և ամրագրվեց նաև ներառական կրթությունը Հայաստանում: Սակայն մինչ այդ «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպությունից հինգ տարի պահանջվեց Երևանի 5 դպրոցներում այն իրականացնելու և որպես հաջողված փորձ ՀՀ կառավարությանը ներկայացնելու համար:
Սա ոչ միայն նշանակում է, որ այս կրթական ձևերը իրավական հիմք ստացավ, այլև որ դա կառավարելու է պետությունը՝ իր վրա վերցնելով նաև համակարգի ֆինանսավորումը:
Այսօր Հայաստանը միակ երկիրն է տարածաշրջանում, որն արդեն ունի ներառական կրթության փորձը և այն դարձրել է պետական քաղաքականության կարևոր մասը: ԱՊՀ երկրներում բազմիցս ներկայացվել են մեր երկրի ձեռքբերումներն այս ոլորտում, որտեղ Հայաստանը շարունակում է մնալ առաջատարը:

Երկրորդ գլուխ

Աուտիզմ

Աուտիզմ բառն առաջացել է լատիներեն autos «ինքդ» բառից, autism՝ «ներփակվել»:

Աուտիզմը զարգացման բարդ խանգարում է, որը հիմնականում ի հայտ է գալիս կյանքի առաջին երեք տարիների ընթացքում և համարվում է նյարդաբանական խանգարում, որը ազդում է ուղեղի նորմալ աշխատանքի վրա, խոչընդոտում սոցիալական հարաբերությունների և հաղորդակցվելու հմտությունների զարգացմանը:

Նման երեխաները խուսափում են բոլոր տիպի շփումներից: Աուտիկ երեխան ոչ թե չի ցանկանում, այլ պարզապես չի կարողանում շփվել մարդկանց հետ:

Աուտիզմը կարելի է դասել 20-րդ դարի չբացահայտված խնդիրների շարքին:

Անցյալ տարվանից ԱՄՆ-ում արդեն խոսում են աուտիզմի պանդեմիայի մասին: Աուտիզմով մարդկանց թիվն ամբողջ աշխարհում ավելացել է 10-15 անգամ: Ինչպես տեղեկացնում են ՀՀ առողջապահության նախարարությունից, դեպքերի ավելացում է նկատվում նաև Հայաստանում:

Աուտիզմի առաջացման պատճառները

Գոյություն ունեն աուտիզմի առաջացման բազմաթիվ տեսություններ, որոնցից և ոչ մեկը լիարժեք չէ: Ծագումնաբանության մեջ նշվում է 9 հնարավոր պատճառ, որոնցից են՝ գենետիկական գործոնը, քիմիական նյութերով, ծանր մետաղներով թունավորումը, աուտոիմուն գործոնները և այլն:

Այն տարբեր պատճառներից (հիմնականում՝ կենսաբանական) առաջացած և տարբեր կլինիկական դրսևորումներով համախտանիշների ամբողջություն է: Դրա հիմքում ընկած են ներարգանդային շրջանում կամ վաղ հասակում գլխուղեղի զարգացման խանգարումները: Որոշակի դեր ունի ժառանգականությունը: Աուտիզմի առաջացմանը կարող են նպաստել նաև միջավայրի գործոնները: Շատ դեպքերում, անգամ ծավալուն հետազոտություններից հետո, դժվար է նշել որևէ կոնկրետ պատճառ: Որոշ դեպքերում աուտիզմը կարող է զուգակցվել նյարդաբանական այլ խանգարումների, հատկապես էպիլեպտիկ ցնցումների հետ: Ըստ վիճակագրական տվյալների, 10000 հոգուց 12-ը

աուտիզմով է, ըստ որում, տղաների շրջանում այն 4-5 անգամ ավելի հաճախ է հանդիպում: Աուտիզմով երեխայի քույրերի կամ եղբայրների մոտ հավանականությունը կազմում է 5%: Աղջիկների մոտ ավելի արտահայտված են մտավոր հետամնացության դեպքերը:

Անցած տասնամյակում աուտիզմի և ուղեղի զարգացման հետ կապված այլ հիվանդությունների դեպքերի քանակն աճել է ամբողջ աշխարհում: Գիտնականները կարծում են, որ այդ աճը պայմանավորված չէ գենետիկայով, նրանք հավատացած են, որ պատճառը շրջական միջավայրում թունավոր քիմիկատների աճն է:

Մանկաբույժ-նյարդաբան Մարթա Հերբերթը ղեկավարում է շրջակա միջավայրում թունավոր քիմիկատների և ուղեղի զարգացման, այդ թվում՝ աուտիզմի վրա դրանց ազդեցության ուսումնասիրությունը:

"Գենները լիցքավորում են ատրճանակը, սակայն ձգանը քաշում է շրջակա միջավայրը",- պատկերավոր նկարագրում է Մարթան:

Տարիներ շարունակ գիտնականները կարծում էին, որ աուտիզմն ունի գենետիկական հիմքեր: Սակայն բժիշկ Հերբերթի կարծիքով՝ շրջակա միջավայրը կարող է վատթարացնել հիվանդությունը: Ըստ նրա՝ հիվանդության տարրերի բացահայտումը և դրանց փոփոխությունը վաղ հասակում կարող է որոշիչ լինել հիվանդության արտահայտման սրության աստիճանի համար:

"Մեր օրգանիզմում կա այսպես կոչված "թունազերծման համակարգ", որի միջոցով օրգանիզմն ազատվում է անցանկալի նյութերից: Դրանք կարող են լինել սեփական օրգանիզմի մթերային թափոնները, աղտոտված օդը, մթերքում առկա պեստիցիդները և այլն",-բացատրում է նա:

Պարզելու համար, թե ինչպես և երբ է ուղեղը ձեռք բերում աուտիզմ, ուսումնասիրության շրջանակում հետազոտվել են աուտիզմ ունեցող և չունեցող մանուկներ, դպրոցահասակներ և մեծահասակներ: Պարբերաբար ստուգվել է ուսումնասիրության մասնակիցների օրգանիզմում թունավոր քիմիկատների առկայությունը, ուղեղի փոփոխությունը և զարգացման շեղումները:

ԱՄՆ-ում գրեթե 3 միլիոն մարդ ախտորոշված է աուտիզմով: 1994թ. աուտիզմ էր ախտորոշվում յուրաքանչյուր 1000-րդ երեխային, իսկ այսօր յուրաքանչյուր 110-րդին: Աուտիզմի միության փոխնախագահ Ջեֆ Սելի խոսքերով՝ պատկերը նույնն է ամբողջ աշխարհում:

"Աուտիզմի աճի պատճառը միայն գենետիկան չէ",- ասում է Սելը: "Չորս երեխաներից երկուսին աուտիզմ է ախտորոշվել, այնինչ ընտանիքում չկան դրա գենները: Տղաներիս օրգանիզմում բարձր է սնդիկի, արճիճի և թոքաբորբի զուգորդված պատվաստուկի մակարդակը":

Երկար տարիներ աուտիզմի դեմ պայքարողները համոզված էին, որ հիվանդության պատճառը պատվաստուկներն են, հատկապես՝ կարմրուկի դեմ պատվաստուկները: Սակայն մի շարք ուսումնասիրություններ պատվաստանյութի և աուտիզմի միջև կապ չեն հայտնաբերել:

Աուտիզմի միությունը պահանջում է վերանայել թունավոր քիմիկատների վերաբերյալ օրենսդրությունը: Սելի խոսքերով՝ շրջակա միջավայր են արտանետվում 82 հազարից ավել քիմիկատներ, այնինչ տեղեկություններ հայտնի են միայն դրանցից 200-ի մասին:

Ըստ Սելի՝ մենք վտանգում ենք ոչ միայն մարդկությունը, այլև աշխարհը, որտեղ ապրում ենք:

Ինչպես է աուտիզմն արտահայտվում

Աուտիզմն արտահայտվում է՝

- Խոսքի օրինաչափությունների խանգարումներով:
- Լեզվի օրինաչափությունների խանգարումներով:
- Ոչ խոսքային շփումների խանգարումներով:

Խոսքի խանգարումներն առաջին հերթին արտահայտվում են շփման նախաձեռնության կորստով: Նա պասիվ է, պատասխանում է հակիրճ և կոնկրետ արտահայտություններով, անտարբեր, պարզ («այո» կամ «ոչ»), հաճախ պատասխանները «ժխտական» են՝ «չգիտեմ», «չեմ հիշում» և այլն: Նման շփումը կոչվում է «ֆորմալ»:

Արտաքինից ընկալվում են որպես քչախոս, «ուրբաթախոս», որպես մենակության ձգտող, մեկուսացած: Երբեմն դիտվում է շատախոսություն, սակայն նրանց զրույցն ավելի նման է մենախոսության, խոսքն ուղղված անորոշ ուղղությամբ, բացարձակապես հետաքրքրված չեն իրենց խոսքի ընկալման, հասկանալու մեջ և պատասխաններ ամենևին չեն ակնկալում: Նման շփումը կոչվում է «դիմազուրկ աուտիզմ»:

Աուտիկների մոտ գերիշխում է ներքին խոսքը: Իրականությունն արտամղվում է նրանց գիտակցությունից՝ տեղը զիջելով աֆեկտիվ-հուզական պահանջմունքներին և ցանկություններին: Ռացիոնալ-կոգնիտիվ հոգեկան գործունեությունը (հատկապես՝ մտածողությունը) իր տեղը զիջում է մտածողության աֆեկտիվ ձևերին, երևակայությանը, որոնք ցանկալին ներկայացնում են որպես իրականություն, հաճախ ոչ ադեկվատ,

անհեթեթ ձևերով: Առաջացող պատրանքները զրկում են ակտիվությունից, ապակողմնորոշում են նրան՝ ոչնչի պետք չէ ձգտել, ամեն ինչ «գրավված» է:

Խոսքն ամբողջովին պարալոգիկ բնույթ է կրում: Նրանց դատողությունները, եզրահանգումները չեն արտահայտում բնության և հասարակության օրենքները, պատճառահետևանքային հարաբերություններն ու կապերը: Դրանց հիմքում ընկած են նրանց աֆեկտիվ պահանջները, ցանկությունները, ինչպես նաև՝ հոգեախտաբանական մեխանիզմները: Միակ տրամաբանությունը, որին հետևում են՝ ցանկությունների տրամաբանությունն է:

Լեզվի օրինաչափությունների խանգարումներն արտահայտվում են մի շարք երևույթներով, որոնցից են՝

Նեոլոգիզմ է կոչվում նոր բառեր, հասկացություններ, իմաստներ ստեղծելու հակումը, ընդ որում՝ միայն նրանց համար հասկանալի, սիմվոլիզմը՝ որոշ նշաններին, առարկաներին ոչ բնորոշ իմաստով և բովանդակությամբ օժտելու հակումն է, խոսքի ագլյուտինացիան բանավոր և գրավոր խոսքում ընդհատման բացակայությունն է, այլ կերպ ասած՝ խոսքի շարանը, որի արդյունքում բառերը չեն ընկալվում, քանի որ ներկայացվում են որպես անբաժան և անհասկանալի հոսք,լեզվի քերականական օրենքների խանգարումը միմյանց հետ չկապակցված բառերի արտասանում է (շիզոֆազիա):

Ոչ խոսքային շփման խանգարումներն արտահայտվում են հետևյալ ախտանիշներով՝ հիպո- և ամիմիա՝ դեմքի ոչինչ չասող արտահայտություն, հայացքն ուղղված է դեպի անորոշություն՝ չկենտրոնանալով զրուցակցի վրա, ժեստիկուլյացիաների նվազում և բացակայություն՝ միանման, միապաղաղ և թորշոմած շարժումներ, դիրքեր, շարժումների ներդաշնակության խանգարումներ, խոսքի արտահայտչականության խանգարում՝ խոսքն աստիճանաբար դառնում է միապաղաղ, ցածրաձայն, հուզականությունից զուրկ, հաճախ դառնում են անխնամ, փնթի, չհետևելով իրենց արտաքինին և վարքին, միապաղաղ, կրկնվող վարքագիծ, անհատականության կորուստ: Աուտիզմը, հիմնականում, դիտվում է որպես շիզոֆրենիայի ախտանիշ / շիզոիդ / խանգարումների ժամանակ: Մանկական տարիքում առանձնացվում է որպես ինքնուրույն խանգարում:

Աուտիկ երեխաները, հազվադեպ մինչև 1-2 տարեկան հասակը, կարող են նորմալ զարգանալ: Հետագայում տեղի է ունենում զարգացման կանգ և ձեռք բերված ունակությունների աստիճանական կորուստ (ռեգրեսիա): Դա առաջինը նկատում են ծնողները, մանկաբույժը կամ ընտանեկան բժիշկը: Աուտիզմի առկայության մասին ենթադրում են, երբ կրծքահասակ կամ արդեն քայլող երեխան իր տարիքին համապատասխան վարքագիծ չի ցուցաբերում: Աուտիզմային վարքագծի հայտնաբերման

լավագույն միջավայրը խաղահրապարակում երեխայի ազատ խաղն է, երբ նրան ոչ մեկ չի ուղղորդում կամ վերահսկում: Կասկածի դեպքում նախ և առաջ երեխային մանկական հոգեբույժի մոտ են ուղարկում: Հետագայում նաև այլ մասնագետների (նյարդաբան, լոգոպեդ, հոգեբան) կարիքն է զգացվում: Աուտիզմն ունի տևական ընթացք: Դպրոցական և պատանեկան հասակի երեխաների զարգացման գործընթացում որոշ ոլորտներում սովորաբար նկատվում է առաջընթաց (օրինակ, հետաքրքրությունների սահմանների ընդլայնում՝ կապված հասարակական աշխատանքի կամ դպրոց գնալու հետ): Պատանեկան հասակում որոշ անհատների վարքագիծը վատանում է, իսկ մի մասինը՝ լավանում: Հետագա ընթացքը կանխագուշակելու լավագույն ցուցանիշներն են խոսքի հմտությունների (օրինակ՝ հաղորդակցման խոսքի) և ընդհանուր իմացական մակարդակի տեղաշարժերը:

Աուտիզմով երեխաների մեծ մասի մոտ առկա է նաև մտավոր հետամնացություն: Հոգեբանական թեստերով դժվար է գնահատել նման երեխաներին, քանի որ նրանք ունեն շփման և հաղորդակցման խանգարումներ: Որոշ երեխաներ, ճիշտ է՝ հազվադեպ, բայց ունենում են լավ զարգացած առանձին ունակություններ, օրինակ՝ բարդ թվային հաշվարկներ են կատարում, խրթին գլուխկոտրուկներ են լուծում, զարմանալի հիշողություն կամ մեծ ընդունակություններ են ցուցաբերում արվեստի և երաժշտության ասպարեզում: Այդ երեխաները մեծամասամբ ասպերգերի սինդրոմով են:

Աուտիկ երեխայի վարքը աչքի է ընկնում ծայրահեղ հակադրություններով: Նա մեկ կարող է ուժեղ վախեր ունենալ, նույնիսկ սովորական առարկաներից՝ լամպերից, աթոռից և մեկ էլ կարող է կորցնել իրական վտանգի զգացումը՝ կանգնել փողոցի մեջտեղը, բարձրանալ բարձր տեղեր, գնալ տնից շատ հեռու: Ծնողները շատ անգամ չեն հասկանում. նրանց վարքը գնահատում են որպես համառություն և ֆիզիկական պատժի միջոցներ կիրառելով՝ փորձում են իրենց ենթարկեցնել:

Աուտիկ երեխաները չեն կարողանում տարբանջատել մարդկանց և անշունչ առարկաներին: Նոր կահույքը, նոր խաղալիքը նրանց մոտ ուժեղ հակասություն է առաջացնում, նրանք սկսում են գոռալ, լացել, քանզի վախը նորություններից զուգակցվում է հիվանդագին կերպով արտահայտվող ինքնապահպանման բնազդի հետ: Նմանատիպ ռեակցիա կարող է նաև առաջանալ քնելու, սնվելու զբոսանքի, լողացնելու ժամանակ:

Առաջարկվել են շտկման բազմաթիվ եղանակներ, սակայն արդյունքները եղել են աննշան: Վաղ ախտորոշումը նպաստում է բուժվերականգնողական միջոցառումների վաղ իրականացմանը՝ ապահովելով տվյալ դեպքի համար հնարավոր առավելագույն արդյունավետություն: Ոչ դեղորայքային բուժումը ուղղված է սոցիալական փոխհարաբերություններ հաստատելու ունակության, ուշադրության, ինչպես նաև առկա

ուժեղ հատկանիշների զարգացմանը։ Շտկումը պետք է հիմնված լինի անհատական կարիքների և հնարավորությունների վրա։ Վարքագծի, շփման և խոսքի զարգացման խթանման համառ ջանքերը կարող են որոշ չափով օգնել աուտիզմով երեխային:
Իրականում գոյություն չունի աուտիզմի հատուկ բուժում։ Բուժումը ախտանշային է։ Օգտագործվում են հակափսիխոտիկ, հոգեխթանիչ, հակադեպրեսանտ, տրամադրությունը կարգավորող և այլ դեղեր:
Դեղորայքի օգնությամբ կարելի է մեղմել աուտիզմին բնորոշ ագրեսիվության պոռթկումները և անքնությունը, գերակտիվությունը, տագնապները, տրամադրության խանգարումները, ինչպես նաև լավացնել ուշադրությունը, ընկալումը, շփումը շրջապատի մարդկանց հետ՝ դրանով իսկ նպաստելով ուսուցման ունակությունների ընդլայնմանը:

Ասպերգերի համախտանիշ

Ասպերգերի համախտանիշը մեկն է, հինգ ընդհանուր (պերվազիվ) աճի խանգարումներից, որին երբեմն անվանում են աուտիզմի բարձր ֆունկցիոնալ ձև (այսինքն՝ աուտիզմ, որի ժամանակ գործունեության ունակությունը համեմատաբար պահպանված է): Ասպերգերի համախտանիշով անձինք հազվադեպ են հանդիպում և կողքից դիտողի համար, նման չեն մտավոր հետամնացների: Որպես մինիմում՝ նրանք ունենում են նորմալ կամ բարձր ինտելեկտ, սակայն ոչ ստանդարտ կամ թույլ զարգացած սոցիալական ունակություններ: Այդ պատճառով էլ, հաճախ նրանց էմոցիոնալ և սոցիալական աճը և ինտեգրացիան տեղի է ունենում սովորականից ավելի ուշ:

"Ասպերգերի համախտանիշ" տերմինը առաջարկվել է անգլիացի հոգեբույժ Լորնա Ուինգի (Lorna Wing) կողմից 1981 թվականին: Համախտանիշը անվանվել է ավստրիացի հոգեբույժ և մանկաբույժ Հանս Ասպերգերի (Hans Asperger) պատվին, ով այս հիվանդության համար օգտագործել է "աուտիկական փսիխոպատիա" անվանումը:

Ասպերգերի համախտանիշի համեմատաբար ավելի կարևոր և տարածված բնութագրիչները կարելի է բաժանել մի քանի լայն խմբերի՝ սոցիալական դժվարություններ, նեղ, սակայն ինտենսիվ հետաքրքրություններ, խոսքի և լեզվի տարօրինակություն:

Ասպերգերի համախտանիշի դեպքում հանդիպող սոցիալական խանգարումները ավելի թույլ են, քան ցածր ինտելեկտուալ զարգացմամբ աուտիզմի ժամանակ: Խանգարման հիմնաքարերից է էգոցենտրիզմը և իրենց հասակակիցների հետ համագործակցելու ունակության կամ ցանկության բացակայությունը: Բնորոշ են

հանդիսանում սոցիալական միամտությունը, չափից դուրս ճշտությունը և շփոթմունքը, երբ անծանոթ մեծերը կամ երեխաները նկատողություն են անում:

Ոչ աուտիկները կարողանում են մեծ քանակի ինֆորմացիա ստանալ շրջապատող մարդկանց կոգնիտիվ (մտավոր) և էմոցիոնալ վիճակի մասին, հիմնվելով շփման կոնտեքստի, դեմքի և մարմնի լեզվի արտահայտման վրա, սակայն Ասպերգերի համախտանիշով անձանց մոտ այս ունակությունը զարգացած չէ: Սրան երբեմն անվանում են "սոցիալական կուրություն"՝ սեփական ուղեղի մեջ ուրիշի գիտակցության մտքերի մոդելի կառուցման անկարողություն: Նրանք չեն կարողանում գլխի ընկնել, թե ինչ ի նկատի ուներ մարդը, եթե նա ուղղակիորեն դա չի արտահայտել (այսինքն կարդալ "տողերի արանքում"): Սա ոչ թե այն պատճառով է, որ նրանք չեն կարողանում պատասխան գտնել, այլ այն պատճառով, որ չեն կարողանում ընտրություն կատարել հավանական պատասխանների միջև՝ "սոցիալական կուրությամբ" տառապող անձը, կամ չի կարողանում բավարար ինֆորմացիա հավաքել որ քայլ անի, կամ էլ չգիտի, թե ինչպես ներկայացնի հավաքած ինֆորմացիան:

Նրանցից շատերը խուսափում են ուղիղ աչքերի մեջ նայելուց, որովհետև դա էմոցիոնալ ծանրաբեռնում է նրանց, որոշներն էլ նայում են աչքերի մեջ ոչ էմոցիոնալ չռված հայացքով, որն դիմացինին բերում է դիսկոմֆորտի վիճակի: Հայացքը հիմնականում անսովոր է: Հենց ինքը՝ Ասպերգերը ընդգծում է հայացքի ֆիքսված բնույթը բացատրելով դա նրանով, որ նրանց ուրիշին նայելու հայացքի պահին աշխատում է ուղեղի այն մասը, որը սովորաբար ընդունում է անշունչ առարկաներից եկած տեսողական ազդակները: Ժեստերը նույնպես կարող են համարյա բացակայել, կամ էլ ընդհակառակը՝ լինել չափազանցված և անտեղին:

Ասպերգերի համախտանիշը կարող է իր մեջ ներկրել հետաքրքրություն առաջացնող օբյեկտի վրա կենտրոնացման ինտենսիվ և օբսեսսիվ (կպչուն) մակարդակներ: Տիպիկ են հանդիսանում նաև հետաքրքրությունների օրինակները, երբ մարդը ինտենսիվ հետազոտում է, կամ չափոց ավելի կլանվում է առարկաներով, որը կարող է նրա տարիքի կամ կուլտուր զարգացման համար տարօրինակ թվա:

Հատկապես տարածված հետաքրքրություններն են՝ տեղափոխման միջոցները և տրանսպորտը (օրինակ՝ գնացքները), համակարգիչները, մաթեմատիկան, աստղագիտությունը, դինոզավրները: Այս ամենը սովորական երեխաների նորմալ հետաքրքրություններ են: Տարօրինակությունը կայանում է նրանց հետաքրքրության ինտենսիվության մեջ: Երբեմն այդ հետաքրքրությունները պահպանվում են ամբողջ կյանքի ընթացքում: Ուրիշ դեպքերում, դրանք, կյանքի անկանխատեսելի պահերի՝ փոխվում են: Ամեն դեպքում, ժամանակի ամեն տրված պահի, առկա են մեկ կամ երկու հետաքրքրություն: Ասպերգերի համախտանիշով մարդիկ, իրենց հետաքրքրությունների շրջանակի մեջ հաճախ շատ նրբանկատ են, ընդունակ են համարյա օբսեսսիվ կենտրոնացման և արտահայտում են ֆենոմենալ, երբեմն նույնիսկ էյդետիկ հիշողություն: Հանս Ասպերգերը անվանում էր իր նրանց "փոքրիկ պրոֆեսսորներ", քանի որ նրա կարծիքով, իր 13 տարեկան երեխաները իրենց հետաքրքրությունների շրջանակներում նույնքան նուրբ և ընդգրկուն

հասկացողություն էին ցուցաբերում, որքան համալսարանական պրոֆեսսորները: Սակայն, ցավոք սրտի, Ասպերգերի համախտանիշով մարդկանց մյուսների հետ կոնտակտի մեջ մտնելու ցանկության բացակայությունը, հատկապես տարիքակիցների հետ, և շրջապատին սեփական մտքերը հասցնելու անկարողությունը (կամ ցանկության բացակայությունը) բերում է այն փաստին, որ ամենատարբեր գիտությունների լայնարձակ իմացությունները այդպես էլ անօգուտ մնում են նրանց ուղեղի խորքերում:

Երբ Ասպերգերի համախտանիշով անձը զբաղված է այն բանով, ինչը նրան հետաքրքրում է, նա դրանից բացի ոչինչ չի տեսնում և չի լսում, այս բառերի ամենաուղիղ իմաստով, ընտրված շրջանակում ցուցադրելով հազվադեպ կոմպետենտություն: Իրենց հետաքրքրություններից դուրս, նրանք սովորաբար բավականին ալարկոտ են: Դպրոցական տարիներին, նրանցից շատերին ընկալում են որպես խելացի բայց չհասցնող, իրենց հետաքրքրությունների շրջանակներում իրենց հասակակիցներից բարձր ունակություններ ունեցող, բայց տնային առաջադրանքները կատարել միշտ ալարող (երբեմն նույնիսկ իրենց հետաքրքրությունների շրջանակներում): Մյուսները՝ ընդհակառակը, կարողանում են հոյակապ հասցնել բոլոր առարկաների մեջ և իրենց հասակակիցներից առաջ անցնելու բարձր մոտիվացիա են ունենում: Հենց սա էլ բարդացնում է համախտանիշի ախտորոշումը: Մեծանալով, երբեմն նրանք հաղթահարում են իրենց ալարկոտությունը և մոտիվացիայի բացակայությունը ու նոր գործունեությունների և նոր մարդկանց նկատմամբ սկսում են համբերատարություն ցուցաբերել: Նույնիսկ նրանք, ում հաջողվում է ընդգրկվել սոցիումի մեջ, շարունակում են իրենց սոցիալական դերի օտարության հետ կապված ճնշող դիսկոմֆորտ զգալ: Ասպերգերի որոշ լատենտ աուտիստներ, իրենց ամբողջ կյանքի ընթացքում, իրենք իրենց հետ թաքուն պատերազմ են տանում, դիմակավորվելով և հարմարվելով շրջապատին ու հարմարացնելով շրջապատը իրենց:

Ասպերգերի համախտանիշով մարդիկ հաճախ առանձնանում են խոսակցության պեդանտային ձևերով, ավելի ֆորմալ և կառուցվածքային լեզու օգտագործելով, քան դա պահանջում է իրավիճակը: Այս համախտանիշով 5-ամյա երեխան կարող է խոսել այն լեզվով, որը համապատասխանում է համալսարանական դասագրքին՝ հատկապես իր հետաքրքրությունների շրջանակներում: Ասպերգերի լեզուն, չնայած իր հնաձև բառերի և արտահայտությունների՝ քերականապես ճիշտ է:

Երեխայի խոսքի զարգացումը լինում է բացառապես վաղ, զարգանալով դանդաղ՝ Ասպերգերի համար բնորոշ կառուցվածքի հետ կապվածության և կյանքի նորմերի անփոփոխության պատճառով, կամ ընդհակառակը՝ ուշ, համեմատած քույրերի և եղբայրների հետ, որից հետո զարգանում է շատ արագ, այնպես, որ 5-6 տարեկանում, երկու դեպքում էլ խոսքը ունենում է ճիշտ, պեդանտիկ, ոչ ըստ տարիքի և հասուն մարդու խոսքին նմանվող բնույթ: Հաճախ երեխան, հիշելով խոսքային շտամպներ, կարող է թվալ խոսակցությունը հասկացող: Սակայն նրա համար շատ դժվար է կամ էլ անհնար դառնալ իսկական զրուցակից: Խոսքի խանգարումներով զբաղվող մասնագետները սովորաբար անվանում են այս պրոբլեմների տիպը՝ սեմանտիկ պրագմատիկ խանգարում տերմինով, ինչը նշանակում է, որ չնայած խոսքի

փորձվածության նորմալ արտահայտմանը, առկա է իրական կյանքի պայմաններում, կոմունիկացիայի համար լեզվի օգտագործման անկարողություն: Ձայնի տոնայնությունը կարող է խանգարված լինել (շատ ուժեղ, չափից ցածր), տեմպը՝ բարձրացված կամ ցածրացված: Խոսքերը հաճախ արտահայտվում են չափից ավելի մոնոտոն և հավասար:

Ասպերգերի համախտանիշ ունեցող մարդիկ կարող են նաև ցուցադրել ուրիշ սենսորային, ֆիզիոլոգիական և զարգացման անոմալիաների դիապազոններ: Երեխաների մոտ հաճախ նկատվում է ճշգրիտ մոտոր ունակությունների դանդաղ զարգացման վկայություններ: Նրանց մոտ շարժման կոորդինացիան ավելի խանգարված է լինում քան մանր մոտորիկան: Հնարավոր են դժվարություններ՝ հեծանիվ վարել, լող, դահուկասահք և չմշկասահք սովորելու մեջ: Նրանք թողնում են չափազանց անշնորհք շարժվող մարդկանց տպավորություն: Դա հատկապես նկատվում է սոցիալական պայմաններում՝ շատ մարդկանց շրջապատում:

Ասպերգերի համախտանիշ ունեցող որոշ մարդիկ տառապում են տարբեր աստիճանի գերբեռնվածություններից և կարող են պաթոլոգիական զգայունություն ցուցաբերել բարձր ձայների և ուժեղ հոտերի նկատմամբ, կամ չսիրել, երբ իրենց դիպչում են, օրինակ ՝ որոշ երեխաներ լուրջ դիմադրում են, երբ որևե մեկը ուզում է շոյել նրանց գլուխը: Այսպիսի սենսորայի գերբեռնվածությունը կարող է սրացնել խնդիրները, որոնց հետ նրանք հանդիպում են դպրոցում՝ որտեղ աղմուկի մակարդակը կարող է նրանց համար անտանելի թվալ: Որոշները ի վիճակի չեն լինում դիմակայել որոշ կրկնվող իմպուլսների, այնպիսի, ինչպիսին են ժամացույցի կտկտոցը: Այն դեպքում, երբ երեխաներից շատերը, մի կարճ ժամանակ հետո դադարում են հակազդել այդ ձայնին և կարողանում են այն լսել միայն կամքի ուժով, այս երեխաները, եթե ձայնը չի կտրվում, շեղվում են, դառնում գրգռված, կամ նույնիսկ (հազվադեպ դեպքերում) ագրեսիվ:

Ասպերգերի համախտանիշ ունեցող մարդկանց 1/3-ը ունակ է "նորմալ" աշխատանք կատարելու և ինքնուրույն ապրելու, չնայած սովորաբար չեն կարողանում իրականացնել ոչ առաջինը, ոչ էլ երկրորդը: Ամենաընդունակներին՝ ընդհանուր թվի 5%-ին, շատ դեպքերում հնարավոր չի լինում տարբերել նորմալ մարդկանցից, սակայն ադապտացիայի խնդիրները կարող են բացահայտվել նեյրոհոգեբանական թեստավորման ժամանակ:

Ասպերգերի համախտանիշ ունեցող երեխաները ցուցադրում են իրենց տարիքի համար ոչ բնորոշ ունակություններ՝ լեզուների, կարդալու, մաթեմատիկայի, տարածական մտածելակերպի, երաժշտության բնագավառներում, որը երբեմն հասնում է "հանճարեղության" աստիճանի: Սակայն, ինչպես արդեն նկատել էինք, դա կարող է հավասարակաշռվել ուրիշ բնագավառներում զարգացման նկատելի ուշացումներով:

Մյուս կողմից, ասպերգերի համախտանիշով մարդկանցից շատերը, կարող են չափից դուրս սուր վերապրել իրենց ամենօրյա ծեսերի խախտումը կամ իրենց հատուկ հետաքրքրությունները արտահայտելու անհնարությունը: Օրինակ՝ ասպերգերի համախտանիշ ունեցող երեխան կարող է, իր երիտասարդ տարիքին համեմատ լինել

հանճարեղ գրող, և հաճույքով աշխատել իր գրած պատմվածքների վրա՝ դասերի ընթացքում: Իսկ ուսուցիչը կարող է պնդել, որ դրա փոխարեն նա ուշադիր լինի դասի ընթացքի նկատմամբ կամ աշխատի տրված առաջադրանքի վրա: Ոչ աուտիկ երեխան, նման պայմաններում կարող է մի քիչ տրամադրության անկում ունենալ, բայց ամեն դեպքում կհետևի ուսուցչի ասածին: Ասպերգերի համախտանիշ ունեցող երեխայի համար, այս փորձությունը կարող է դառնալ չափազանց տրավմատիկ, իսկ հակազդումը՝ զարմացնի ուսուցչին և դասարանի մյուս աշակերտներին: Սովորաբար, իր մեջ պարփակված երեխան հանկարծ սկսում է, իրավիճակին անհամապատասխան չափերի չարանալ կամ տխրել: Այդ պահին, երեխայի արարքի քննադատությունը (օրինակ՝ գնահատականը, որպես անհասուն կամ անհարգալից), կարող է լուրջ վնաս հասցնել նրա արժանապատվությանը, ինչը առանց այն էլ շատ փխրուն էր:

Ասպերգերի համախտանիշը նկարագրված է DSM-IV-ի (հոգեկան հիվանդությունների ախտորոշման և վիճակագրության տեղեկատու) 299.80 գլխում որպես՝

1. Սոցիալական փոխհարաբերությունների որակային բարդություններ, արտահայտված հետևյալ դետալներից գոնե երկուսով՝

- Սոցիալական փոխհարաբերությունների կարգավորման համար հետևյալ ոչ խոսքային վարքի նկատելի խանգարումներ, ինչպիսիք են՝ աչքերի մեջ նայելը, դեմքի արտահայտությունները, մարմինը (կանգնվացքը) և ժեստերը:
- Հասակակիցների հետ հարաբերությունների զարգացման անհաջողություն մինչև զարգացմանը չհամապատասխանող մակարդակ:
- Ուրիշ մարդկանց հետ ուրախության, հետաքրքրության կամ ցուցանիշները կիսելու սպոնտան ձգտման բացակայություն (օրինակ՝ ուրիշ մարդկանց ցույց չտալով, չբերելով և հետաքրքիր բանը չմատնանշելով):
- Սոցիալական և Էմոցիոնալ փոխադարձության բացակայություն:

2. Սահմանափակ, կրկնվող և կարծրատիպային վարքի շաբլոններ, հետաքրքրություններ և գործողություններ, որոնք ցուցադրվում են հետևյալ ձևերից գոնե մեկով՝

- Կլանված զբաղվելը մեկ կամ մի քանի կարծրատիպային և սահմանափակ հետաքրքրությունների համալիրով, ինչը աննորմալ է կամ ինտենսիվությամբ, կամ էլ կենտրոնացվածությամբ:
- Կոնկրետ ամենօրյա գործողություններին և ծեսերին, ոչ ճկուն, ակնհայտ հետևվում:
- Կարծրատիպային և կրկնվող մոտոր շարժումներ (mannerisms) (օրինակ՝ ծափեր կամ ձեռքի մատերի պտտում, կամ էլ ամբողջ մարմնով արվող բարդ շարժումներ):
- Դետալների կամ առարկաների նկատմամբ ցուցաբերած խիստ հետաքրքրություն:

3. Այս խանգարումը բերում է կլինիկական նշանակալի թերությունների, սոցիալական, մասնագիտական և գործունեության այլ կարևոր սֆերաներում

4. Բացակայում է, կլինիկապես նշանակալի, խոսքի զարգացման ընդհանուր ուշացումը (այսինքն, առանձին բառեր օգտագործվում են արդեն երկու տարեկան հասակում, իսկ կապակցված ֆրազաներ՝ երեք տարեկան հասակում):

5. Բացակայում է, կլինիկապես նշանակալի, իմացական ոլորտի զարգացման կամ ինքնասպասարկման փորձառության՝ տարիքին համապատասխան, ադապտիվ վարքագծի (բացառապես սոցիալական փոխհարաբերություններ) և մանկությունում, սոցիալական միջավայրով հետաքրքրասիրության ուշացումը:

6. Չեն բավարարվում շիզոֆրենիայի կամ զարգացման այլ կոնկրետ ընդհանուր խաթարումների չափանիշները:

Մանկական աուտիզմ

Աուտիզմը հոգեբանական օտարացման ծայրահեղ ձևն է, որն արտահայտվում է շրջապատող իրականության հետ երեխայի հաղորդակցման խախտումներով և սեփական ապրումների մեջ խորասուզվածությամբ: Մանկական աուտիզմը ներգրավված է ամենաթափանց խանգարումների խմբի մեջ, որն արտահայտված է հոգեկանի բոլոր կողմերի զարգացման խախտումներով՝ ինտելեկտուալ, հուզական (խախտվում են զգայությունները, խոսքը, հիշողությունը):

Շփման խանգարումը երեխաների մոտ հաճախ հանդիպող երևույթ է: Դրանց պատճառները տարբեր են՝ դաստիարակման անբարենպաստ պայմաններ, վախեր, հոգեբանական տրավմաներ, երեխայի բաժանումը ընտանիքից և այլն: Այն կարող է արտահայտվել նաև խոսքի խանգարմամբ:
Բոլոր աուտիզմով երեխաներին նաև բնորոշ է նույն շարժումների անիմաստ կրկնումը: Այս երեխաներից շատերին բնորոշ է նաև չափազանց ագրեսիվությունը, իմպուլսիվությունը, որը երբեմն զուգակցվում է շարժումների արգելափակմամբ:
Հենց կյանքի առաջին ամիսներին այսպիսի երեխաները աչքի են ընկնում հոգեշարժական զարգացման խանգարումներով: Առաջին հերթին խուսափումը ցանկացած կոնտակտից: Նա չի սեղմվում մորը, երբ մայրը գրկում է իրեն, չի նայում աչքերի մեջ և խուսափում է ուղիղ հայացքից: Հաճախ նաև չեն արձագանքում լսողական ազդանշաններին:
Հենց առաջին ամիսների ընթացքում արդեն բացակայում է արտահայտիչ միմիկան, ժպիտը, ծիծաղը, որոնք շատ բնորոշ են շփվող և առողջ երեխային: Դիտվում է նաև քնի խանգարում: Ոչ բավարար հուզական ռեակցիան մոր հանդեպ կարող է փոխարինվել նրանից կախվածությամբ: Մորից բաժանումը այդ դեպքում բերում է ուժեղ հակազդման:

Աուտենտիկ երեխայի վարքը աչքի է ընկնում ծայրահեղ հակադրություններով: Նա մեկ կարող է ուժեղ վախեր ունենալ, նույնիսկ սովորական առարկաներից՝ լամպերից, աթոռից, և մեկ էլ կարող է կորցնել իրական վտանգի զգացումը՝ կանգնել փողոցի մեջտեղը, բարձրանալ բարձր տեղեր, գնալ տնից շատ հեռու: Ծնողները շատ անգամ չեն հասկանում, որ երեխան հիվանդ է, նրանց վարքը գնահահատում են որպես համառություն և ֆիզիկական պատժի միջոցներ կիրառելով՝ փորձում են իրենց ենթարկեցնել:

Վինգը գրում է, որ վաղ մանկական աուտիզմը շատ հազվադեպ հանդիպող ձև է: Նրա տվյալներով տարածվածությունը կազմում է 10.000 երեխաներից 2-ը: Աուտիզմի բոլոր տեսակների մեջ հանդիպող համընդհանուր ախտանիշներից են շրջապատողների հետ կոնտակտի մեջ մտնելու պահանջմունքի արտահայտված լրիվ կամ մասնակի բացակայությունը, հուզական սառնությունը, անտարբերությունը, շրջապատում տեղի ունեցող ցանկացած փոփոխության հանդեպ վախը, կարգուկանոնի հանդեպ հիվանդագին հետևումը, միատեսակ շարժումները, խոսքի խանգարումները:

Աուտենտիկ սինդրոմը ավելի հստակ արտահայտվում է 2-5 տարեկանում, սակայն առանձին նախանշաններ կարելի է նկատել առավել վաղ տարիքում:

Աուտիզմով երեխաները երբեք չեն կարողնաում տարանջատել մարդկանց և անշունչ առարկաներին: Նոր կահույքը, նոր խաղալիքը նրանց մոտ ուժեղ հակասություն է առաջացնում, նրանք սկում են գոռալ, լացել, քանզի վախը նորություններից զուգակցվում է հիվանդագին կերպով արտահայտվող ինքնապահպանման բնազդի հետ: Նմանատիպ ռեակցիա կարող է նաև առաջանալ քնելու, սնվելու զբոսանքի, լողացնելու ժամանակ:

Աուտիկ երեխաները ձգտում են մենակության և իրենց շատ լավ են զգում, երբ մենակ են մնում: Մոր հանդեպ վերաբերմունքը նրանց մոտ կարող է երկակի բնույթ ունենալ: Ոմանք թշնամաբար հետ են մղում իրենց մորը՝ ապահովելով իրենց մենակությունը, իսկ ոմանք՝ ուժեղ կախվածություն ունեն մորից և ցանկացած բաժանում, նույնիսկ կարճատև, ծանր են տանում՝ չնայած որ նրանց հանդեպ երբեք էլ քնքշանք չեն արտահայտում:

Աուտիկ երեխաների կյանքի երկրորդ տարում սկսվում են արտահայտվել ստերիոտիպ, կրկնվող գործողությունները, անկանոն շարժումները, վերջույթների թափահարում, մատների շարժումներ, քայլեր, վազք, թռչկոտում, պտույտներ սեփական առանցքի շուրջ և այլն:

<u>Խոսքի ձևավորումը</u> կարող է աուտիկ երեխաների մոտ ուշանալ, նրանց խոսքը ոչ կոմունիկատիվ է և զուրկ էքսպրեսիայից: Մինչև 5-6 տարեկան երեխաները դժվար են պատասխանում հարցերին կամ տալիս են դժվարմատչելի պատասխաններ: Կարող է զարգանալ նաև <<ավտոնոմ խոսքը>> սեփական անձի հետ: Նրանք կարող են նույնիսկ լսած նախադասությունները նույնությամբ կրկնել /ֆոնգրաֆիզմ/: Խոսքի հիմնական ախտաբանական դրսևորումներից են նեոլոգիզմները, կոդավորված նախադասությունները, երկարացված ինտոնացիան, ռիթմիկ չլինելը, սեփական անձի հանդեպ 2-րդ և 3-րդ դեմքի դերանունների կիրառումը: Երեխաների մի մասի մոտ դիտվում է նաև լրիվ մուտիզմ:

<u>Աֆեկտիվ դրսևորումները</u> վաղ և նախադպրոցական տարիքի երեխաների մոտ շատ թույլ են արտահայտված: Ավելի հաճախ դրանք պրիմիտիվ աֆեկտներ են՝ ուղեկցվող մոնոտոն լացով, ջղայնությամբ կամ դժգոհությամբ: Այս աֆեկտները ավելի են

արտահայտվում, երբ փորձում են ներխուժել իրենց զգացմունքների մեջ: Դրական աֆեկտները կարող ե ուղեկցվել ստերիոտիպ գործողություններն անընդհատ կրկնելու միջոցով:

Ինտելեկտը: Հոգեբանները գտնում են, որ ինտելեկտուալ ֆունկցիաների զարգացումը խոչընդոտում է աուտենտիկ վարքը: Վիկինգի կատարած հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ աուտենտիկ երեխաների 50-60%-ը ունեին խորը մտավոր թուլություն, 15-20%-ը՝ ինտելեկտուալ անբավարվածություն, իսկ մնացած 15-20%-ը ունեին նորմալ ինտելեկտ: Երեխաների մոտ ինտելեկտուալ զարգացումը կախված է նրանց նոզոլոգիական պատկանելությունից կամ հիվանդության կլինիկական յուրահատկությունից:

Վաղ մանական աուտիզմի զարգացման դինամիկան կախված է տարիքից: Նախադպրոցական տարիքի վերջում արդեն բնազդային և սոմատովեգետատիվ խանգարումները հարթվում են, և աստիճանաբար վերանում են ստերիոտիպ շարժումները: Երեխաների մի մասի մոտ բարելավում է խոսքի արտահայտումը. սկզբում ստացվում է հարցերին պատասխանելը, հետո սպոնտան խոսքը: Որոշ երեխաների մոտ պահպանվում է ավտոնոմ խոսքը, ոչ մանկական բառերի օգտագործումը, խորը փիլիսոփայական հարցադրումները: Փոխվում է նաև նրանց խաղային գործունեությունը:

Փոքր դպրոցական տարիքում տեղի է ունենում մանկական աուտիզմի ռեդուկցիա, ախտանիշների տրանսֆորմացիա դեպի հոգեախտաբանական վիճակներ, ինտելեկտուալ անբավարարվածության, սահմանային իրավիճակեր, մտավոր թուլության ատիպիկ վճակներ: Պահպանվում է նաև հուզական անտարբերությունը:

Աուտիզմի առաջացման պատճառների հարցում տարբեր մասնագետներ տարբեր կարծիքներ են հայտնում: Կաները կարծում է, որ դրա պատճառը դա կենսաբանական մեխանիզմների բնածին անբավարարվածությունն է: Ասպերգերի կարծիքով պատճառը բնազդների թույլ զարգացվածությունն է: Կա կարծիք նաև ընկալման խանգարման մասին, որի պատճառով <<տեղեկատվության ընկալման պատնեշ>> է ստեղծվում: Լեմպը գտավ, որ պատճառը դա լսողական ապարատի խանգարումն է, որի հետևանքով երեխան սահմանափակում է շփումը: Ըստ առաջացման պատճառների՝ հարավային հոգեթերապևտները առանձնացնում են աուտիզմի երկու ձևեր՝ պսիխոգեն, օրգանական և սոմատոգեն:

Պսիխոգեն աուտիզմը առաջանում է երեխային հուզական դեպրիվացիայի պայմաններում դաստիարակման հետևանքով (մոր հետ երկարատև բաժանում, ոչ ճիշտ դաստիարակություն): Ի տարբերություն այլ տեսակների՝ աուտիզմի այս տեսակը ունի անցողիկ բնույթ, ենթարկվում է արագ հետադարձ զարգացման:

Սոմատոգեն աուտիզմը առաջանում է գլխուղեղի վնասվածքի հետևանքով, բնորոշվում է հոգեկան իներտությամբ, թույլ հիշողությամբ, շարժումների անբավարարությամբ: Հնարավոր են նաև էպիլեպտիկ նոպաներ: Ուժեղ արտահայտվում են ինտելեկտի և խոսքի խանգարումները: Աուտենտիկ խանգարումները գիտնականները նաև փորձում են բացատրել Կաների և Ասպենգերի սինդրոմի օգնությամբ:

Երրորդ գլուխ

Աուտիզմով սովորողների կրթության կազմակերպումն ու ներառումը

Աուտիզմով սովորողների կրթության լիարժեք կազմակերպման ու ներառման համար, անհրաժեշտ է, որ դասավանդողները հաշվի առնեն մի շարք հանգամանքներ.

●Դասարանում հնարավորինս քիչ լինեն կոնֆլիկտները, հուզական լարվածությունը, աղմուկը:

●Սահմանափակվեն բոլոր տիպի կտրուկ փոփոխությունները՝ դասարանի ընդհանուր կահավորումը, իր նստելու տեղի փոփոխությունը, միջավայրը և այլն:

●Սկզբնական շրջանում խուսափել մարմնի կոնտակտից:

● Ուշադրություն դարձնել հասակակիցների հետ շփմանը:

● Հնարավորինս ընդգրկել խաղերի մեջ:

● Հաճախակի կազմակերպել զբոսանքներ:

● Չստիպել անել այս կամ այն գործունեությունը՝ դիտելով դա որպես կամակորություն:

● Լինել համբերատար ու հոգատար:

● Պահանջները լինեն իր հնարավորությունների սահմանում:

Անհատական ուսուցման պլան (ԱՈՒՊ)

Անհատական ուսուցման պլանը՝ ԱՈՒՊ-ը, ուղեցույց է կամ միջոց ուսուցիչների, դաստիարակների, երեխաների հետ աշխատող մասնագետների, ծնողների համար: Այն օգնում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների անհատական ուսուցումը հանրակրթական դպրոցներում արդյունավետ կազմակերպելուն և նրա կրթական հատուկ կարիքները բավարարելուն: Սովորողների ԱՈՒՊ-ը կազմակերպվում է **դիտարկման և գնահատման** արդյունքների և եզրահանգումների հիման վրա: ԱՈԻՊ-ը կազմում է հետևյալ բազմամասնագիտական խումբը.

- ուսուցիչ
- հատուկ մանկավարժ
- սոցիալական աշխատող
- ծնող
- այլ մասնագետներ (հոգեբան, սուրդոմանկավարժ):

ԱՈՒՊ-ը կրթական գործընթացի պլանավորումն է: Այն պետք է ունենա հատուկ ձևակերպված վերջնանպատակ, տարեկան նպատակ, կարճաժամկետ խնդիրներ (վերջնանպատակին և տարեկան նպատակին հասնելու համար) և տարեկան ծրագիր: ԱՈՒՊ-ում անպայման պետք է նշվի, թե ո՞ր ծրագրերից է օգտվել խումբը նպատակները և կարճաժամկետ խնդիրները ձևակերպելու համար: ԱՈՒՊ-ները կազմվում են պետության կողմից հաստատված հատուկ կրթության առարկայական չափորոշիչներով և ծրագրերով, որոնք առանձնացված են ըստ թեթև, չափավոր, ծանր մտավոր հետամնացության: ԱՈՒՊ-ը գրվում է որոշակի ժամանակահատվածի համար: ԱՈՒՊ-ը կազմող թիմը պետք է հավաքվի 6, իսկ անհրաժեշտության դեպքում 3 ամիսը մեկ անգամ, որպեսզի վերանայի նպատակները և խնդիրները, քննարկի երեխայի ուսումնական առաջընթացը: Երեխայի մեծանալու հետ փոփոխվում են նրա ուսումնական կարիքները: ԱՈՒՊ-ը պետք է փոփոխվի ըստ անհրաժեշտության:

Զարգացնող խաղեր

«Ընտանի կենդանիներ»

Նպատակ: Զարգացնել ուշադրությունը:

Դիդակտիկ նյութեր: Ընտանի կենդանիներ պատկերող դիդակտիկ պարագաներ:

Ընթացքը: Խաղավարը երեխաներին տեղեկացնում է, որ նկարներում կփորձեն գտնել ընտանի կենդանիներին: Ախոռում ապրում են ընտանի կենդանիներ՝ խոզուկը, կովիկը, ուլիկը, գառնուկը և ձիուկը; Խաղավարը երեխային առաջարկում է ուշադիր նայել և կրկնել ախոռի կենդանիների անունները: Այնուհետև խնդրում է փակել աչքերը: Խաղավարը պահում է կենդանիներից մեկը, երեխան բացում է աչքերը; Խաղավարն ասում է, որ կենդանիներից մեկը փախել է ախոռից, և նրանք պետք է միասին փորձեն գտնել, թե որ կենդանին է փախել: **Այս խաղը կարելի է նաև նոթբուք ծրագրով անել:**

«Լրացնել նկարչի բացթողածը»

Խաղի նպատակը

● Նուրբ շարժողականության և շոշափելիքի զարգացում:

● Տեսատարածական, տեսաշարժողական կոորդինացիայի զարգացում:

● Խոսքի զարգացում /բառապաշարի հարստացում, խոսքի ըմբռնում:

● Ուշադրության կենտրոնացում:

Խաղավարներ՝ դասվար, դաստիարակ, մանկավարժ, հատուկ մանկավարժ, ծնող:

Պարագաներ՝ Գծագրական մատիտ, աշխատանքային տետր, որտեղ յուրաքանչյուր էջում կան ուրվագծված պատկերներ՝ բաց թողնված մասնիկներով, հատուկ գունավոր փոշիներ:

Խաղի ընթացքը.Խաղավարն առաջարկում է.

● Գտնել և ցույց տալ անավարտ պատկերները:

● Ավարտել նկարչի անավարտ աշխատանքը:

● Վերցնել գունավոր փոշիները և մատիտներով գունավորել ուրվագծված պատկերները:

● Նկարի շուրջ հորինել փոքրիկ պատմություն:

«Բերքահավաք»

Նպատակները.

● Տեսատարածական կողմնորոշման, նուրբ շարժողականության և կոորդինացիայի զարգացում:

● Խոսքի զարգացում, բառապաշարի հարստացում:

● Ուշադրության կենտրոնացում, հիշողության զարգացում:

● Մրգերի և բանջարեղենի տարբերակում:

● Տարվա եղանակների ընկալում՝ **աշուն**

Խաղավարներ՝ դասվար, դաստիարակ, մանկավարժ, հատուկ մանկավարժ, ծնող:

Պարագաներ՝ պաստառ, որի վրա պատկերված է աշնանային այգի:

Միրգ, բանջարեղեն պատկերող նկարներ, զամբյուղ:

Խաղի ընթացքը.

1-ին տարբերակ: Երեխայի առջև դրվում է այգի պատկերող պաստառը:

Խաղավարը հարցերի միջոցով պարզում է, թե ինչ է պատկերված պաստառի վրա/ աշուն, մրգատու ծառեր, բանջարեղենի մարգեր, զամբյուղ, տնակ/:

Խաղավարը առաջարկում է «հավաքել» միայն մրգերը և տեղավորել զամբյուղի մեջ:

2-րդ տարբերակ: Խաղավարը առաջարկում է «հավաքել» բանջարեղենը և տեղավորել զամբյուղի մեջ:

Այս խաղը կարելի է նաև նոթբուք ծրագրով իրականացնել:

«Ձնեմարդ»

Նպատակները

● Սովորեցնել կատարել գործողությունները ըստ օրինակի:

● Տարածական ընկալման զարգացում:

● Համեմատելու ունակության զարգացում:

● Արդյունքի հասնելու քայլերի պլանավորման ձևավորում:

Պարագաներ՝ ձնեմարդու նկար, երեք տարբեր չափերի խմորից գնդակներ, մեծ և փոքր կոճակներ, գազար, խցան, պլաստիլինից պատրաստված ժպիտ:

Խաղի ընթացքը: Խաղավարը երեխաներին ցույց է տալիս ձնեմարդու նկարը, այնուհետև յուրաքանչյուր երեխայի առաջարկում է վերոհիշյալ պարագաները: Երեխաները, ունենալով խաղի անհրաժեշտ պարագաները, նմանալման միջոցով պատրաստում են ձնեմարդու, որն իր չափով պետք է համապատասխանի նկարի ձնեմարդու չափերին:

«Բնության երևույթներ»

Նպատակները.

● Ընդօրինակելու կարողության զարգացում:

● Զարգացնել մեծի և երեխայի հուզական շփումը :

● Համագործակցելու կարողության զարգացում:

● Բնության երևույթների նկարներ՝ անձրև, քամի, ձյուն, տերևաթափ:

Ընթացքը: Խաղավարը խնդրում է բոլոր երեխաներին մոտենալ իրեն: «Ամպերը կուտակվում են անձրև է գալու: Կատարե՛ք ինձ նման: Հիմա մենք անձրևի կաթիլներ ենք»,-ասում է նա և ձեռքերը դնում է սեղանին: Խաղավարը ձեռքերի մատները սկզբում դանդաղ և կամաց, ապա քիչ-քիչ արագացնելով և ուժեղացնելով տեղեկացնում է սեղանին: Երեխաները ընդօրինակում են մեծի գործողությունները՝ ստեղծելով անձրևի ձայն:

«Հիմա մենք ձյան փաթիլներ ենք»,-ասում է խաղավարը և, ձեռքերը շարժելով օդում, պտտվում: Երեխաները ընդօրինակում են մեծերին:

«Հիմա մենք քամի ենք»,-ասում է խաղավարը և սկսում է օրորվել, ձեռքերը տանում է դեպի կողք, ապա թափահարում, հետո «քամին ուժեղանում է», և խաղավարը վազում է սենյակով մեկ՝ իր հետևից տանելով երեխաներին: Երեխաները ընդօրինակում են խաղավարին՝ դառնալով թափվող տերևներ և հերթով ընկնում են փափուկ գորգին:

«Որ մասնիկն է բացակայում»

Նպատակները՝

● Զարգացնել ուշադրությունը և առարկայի ամբողջական ընկալման կարողությունը:

Պարագաները՝ առարկաների նկարներ, որոնցում բացակայում են որոշ մասնիկներ, աթոռ՝ առանց ոտքերի, դուռ՝ առանց բռնակի, մեքենա՝ առանց անվադողերի, ինքնաթիռ՝ առանց թևերի:

Ընթացքը: Խաղավարը երեխային ցույց է տալիս նկարը և առաջարկում գտնել նկարչի բաց թողած մասնիկը: Այնուհետև խաղավարը երեխային տալիս է նախօրոք պատրաստված, առանձին կտրված բացակայող մասնիկները, և երեխան ինքնուրույն սոսնձում է այն ճիշտ տեղում՝ նկարները դարձնելով ամբողջական:

Գդալներով խաղեր

Խաղի նպատակը՝ «Մեծ և փոքր » հասկացությունների տարբերակում, հաշվելու, համեմատելու, խմբավորելու կարողության ձևավորում, զարգացում, ուշադրության կենտրոնացում:

Գդալներով խաղը ավելի կենցաղային է, այս խաղը կարելի է խաղալ տանը, ուտելու ժամին: Կարելի է մինչև տասը մեծ և փոքր գդալներ տալ և թողնել երեխան հաշվի, խմբավորի՝ մեծերը մեծերի հետ դնի, փոքրերը՝ փոքրերի, այնուհետև համեմատի, որն է շատ, որը քիչ կամ միգուցե հավասար են:

Հողաթափեր

Խաղի նպատակը՝ ուշադրության, հիշողության զարգացում, համեմատելու, հաշվողական կարողությունների ձևավորում, զարգացում:
Հողաթափերով կարելի է խաղալ բազում խաղեր:
Օրինակ 1. Հողաթափերը խառնում ենք և երեխաները է դասավորեն ճիշտ հերթականությամբ:
Օրինակ 2. Երեխաները շրջանաձև նստում են: Բոլոր երեխաները հանում են իրենց հողաթափերից մեկը և դնում են շրջանի ներսում: Գալիս է երեխաներից մեկը, վերցնում է մի հողաթափ և ուշադիր նայում է, որպեսզի տեսնի ում հողաթափն է, գուշակում է տալիս է հողաթափը տիրոջը, ինքը նստում է, իսկ հողաթափի տերը հագնում է և ինքն է վերցնում և գուշակում, և այդպես մինչև վերջանան հողաթափերը:
Օրինակ 3. Կարելի է հաշվել մեկ պահարանում քանի հողաթափ է տեղավորվում, արդյոք երկրորդ նույնապիսի պահարանում այդքան հողաթափ կտեղավորվի, կարելի է կրկին փորձել դասավորել հողաթափերը երկրորդում, որպեսզի համոզվենք նույն է թե ոչ:
Վերջում կարելի է հաշվել, երկու պահարաններում միասին քանի հողաթափ տեղավորվեց:
Օրինակ 4. Կարելի է նաև այս նույն հողաթափերով խաղալ մի այլ խաղ: Կարելի է հաշվել հողաթափերը գումարելով, 1-ով, 2-ով և այլն:
Օրինակ 5. Հողաթափերով կարելի է նաև համեմատել: Որ հողաթափն է մեծ, իսկ որը փոքր:

Եզրակացություն

Այսպիսով, իմ աշխատանքի ընթացքում պարզեցի, թե ինչ է իրենից ներկայացնում ներառական կրթությունը, առտիզմը որպես հատուկ կարիք և նրանց կրթության կազմակերպման ու ներառման հնարավոր ուղիները: Ներառական կրթությունը նպաստում է հասարակության բոլոր անդամների հնարավորությունների հավասարեցմանը՝ հաստատելով նոր հարաբերություններ և ստեղծագործական հնարավորություններ, որոնք անցյալում անհնար էին:

Այսօր Հայաստանը միակ երկիրն է տարածաշրջանում, որն արդեն ունի ներառական կրթության փորձը և այն դարձրել է պետական քաղաքականության կարևոր

մասը: ԱՊՀ երկրներում բազմիցս ներկայացվել են մեր երկրի ձեռքբերումներն այս ոլորտում, որտեղ Հայաստանը շարունակում է մնալ առաջատարը:

Ինքս աշխատելով աուտիկ սովորողի հետ՝ եկա այն եզրակացության, որ նրանք լիովին կարող են ներառվել և իրենց կրթությունը կազմակերպել հանրակրթական դպրոցներում: Ուսումնասիրելով դպրոցում սովորող աուտիկ երեխաներին՝ պարզեցի, որ նրանք բոլորն էլ այս կամ այն չափով ներգրավված են ուսումնական գործունեությանը:

Այստեղից կարելի է եզրակացնել, որ ծրագիրը նպաստում է այս խնդրով երեխաների լիարժեք ներգրավմանը՝ թե՛ ուսումնական պրոցեսին և թե՛ հետագայում նաև հասարակության մեջ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աուտիզմ http://gradaran.mskh.am/sites/default/files/autism.pdf
2. Աուտիզմ. «Հասարակությունը պետք է հասկանա, որ դա ամաչելու բան չէ» http://panorama.am/am/health/2013/04/02/outism/
3. Շրջակա միջավայրը՝ աուտիզմի պատճառ http://www.amerikayidzayn.com/content/a-55-new-research-theorizes-link-between-autism-and-toxic-chemicals-93471784/695665.html
4. Աուտիզմ http://hy.wikipedia.org/wiki/%D4%B1%D5%B8%D6%82%D5%BF%D5%AB%D5%A6%D5%B4
5. Մանկական աուտիզմ http://www.hogeban.info/child-autizm.php
6. Հիվանդություններ աուտիզմ http://www.med-practic.com/arm/40/%D4%B1%D5%B8%D6%82%D5%BF%D5%AB%D5%A6%D5%B4/view_disease.html
7. Աուտիզմ http://www.doctors.am/am/diseases/%D4%B1%D5%B8%D6%82%D5%BF%D5%AB%D5%A6%
8. **Ներառական կրթության իրականացման ուղեցույց, (Հանրակրթական Հաստատությունների մանկավարժական աշխատողների համար): Հրատարակչություն Ե.: ՀՀ Կրթության և գիտության նախարարություն , Կրթության Ազգային ինստիտուտ, 2008**
9. http://www.psyhelp.am/kunstkammer/strange-diseases/asperger-syndrome
10. http://www.amerikayidzayn.com/content/a-55-new-research-theorizes-link-between-autism-and-toxic-chemicals-93471784/695665.html